



ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
/REPUBLIC/ POLITICAL PARTY

ՀՀ, 0010, ք. Երևան Տերյան 1/1, բն.22, հեռ` +374 (33) 758 383, էլ. փոստ` hanrapetutyunparty@gmail.com, վեբ կայք`
hanrapetutyunparty@gmail.com
1/1 Teryan, 22 apt. , Yerevan 0010, RA, Tel: +374 (33) 758 383, E-mail: hanrapetutyunparty@gmail.com, Web:
hanrapetutyunparty@gmail.com

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ**

ԴԻՄՈՒՄ

1. Դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը փաստական հանգամանքները, դիմումի հիմքում դրված հիմնական հարցերը (ընտրական օրենդրության էական խախտումները).

1.1. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ <<ԿՀՀ>>) 03.05.2026թ. N 85-Ա որոշմամբ գրանցվել է <<ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ>> կուսակցության ընտրական ցուցակը՝ ՀՀ Ազգային ժողովի 2026թ. հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրություններին մասնակցելու համար:

1.2. ԿՀՀ-ի 03.05.2026թ. N 69-Ա որոշմամբ գրանցվել է <<ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը՝ ՀՀ Ազգային ժողովի 2026թ. հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրություններին մասնակցելու համար:

1.3. 2026թ. ՀՀ Ազգային ժողովի համապետական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրություններին մասնակցող <<ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ>>

Ժ. 17²⁵

կուսակցությունների դաշինքի և/կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից, նրանց ուղղորդմամբ, թողտվությամբ, խթանմամբ և/կամ համաձայնությամբ ենթադրաբար կատարվել են ընտրակաշառքի բաժանման և ընտրողների մոտ այլ եղանակով քողարկված գույքային շահագրգռվածության ձևավորմանն ուղղված բազմաթիվ գործողություններ, որոնք արձանագրվել և բացահայտվել են ՀՀ իրավապահ մարմինների կողմից:

1.4. 2026թ. ՀՀ Ազգային ժողովի համապետական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրություններին մասնակցող <<ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ>> կուսակցությունների դաշինքի օգտին դրսևորվել են ՀՀ ընտրական գործընթացի և դրա արդյունքների նկատմամբ էական ազդեցություն գործելուն միտված արտաքին ազդեցության բազմաթիվ դեպքեր:

1.5. 2026թ. ՀՀ Ազգային ժողովի համապետական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրություններին մասնակցող <<ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ>> կուսակցությունների դաշինքի կողմից հայտարարված վարչապետի թեկնածուն ընդգրկված չէ նույն քաղաքական միավորման արդեն իսկ գրանցված ընտրական ցուցակում, նրա թեկնածությունը չի համապատասխանում ՀՀ գործող օրենսդրության պահանջներին, ուստի <<վարչապետի թեկնածու>>-ի նախընտրական գործընթացին մասնակցությունը գտնվում է ՀՀ Սահմանադրության և ՀՀ Ընտրական օրենսգրքի կարգավորումների տիրույթից դուրս և նույնպես կարող է համարվել ընտրությունների ընթացքի վրա արտաքին ազդեցության դրսևորման դեպք՝ հաշվի առնելով նրա ունեցած օտարերկրյա քաղաքացիությունները և արտասահմանից հսկայական ֆինանսական հոսքեր ունենալն ու դրանք նախընտրական գործընթացներում ենթադրաբար ապօրինի կերպով կիրառելու հանգամանքը:

1.6. Ընտրություններին մասնակցող <<ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի 1-ին համարում ընդգրկված և դե ֆակտո դաշինքի վարչապետի փաստացի թեկնածու հանդիսացող անձը ենթադրաբար չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության և ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջներին (քաղաքացիության հարցով)՝ հիմք ընդունելով նախաձեռնված քրեական վարույթով ՀՀ իրավապահ մարմինների կողմից, ինչպես նաև ՀՀ բարձրագույն պաշտոնատար անձանց կողմից արդեն իսկ հրապարակված տեղեկատվությունը՝ վերջինիս կողմից օտարերկրյա քաղաքացիություն ունենալու փաստը թաքցնելու մասին:

1.7. Զանգվածային լրատվական դաշտում առկա են բազմաթիվ հրապարակումներ ապօրինի եղանակով ՀՀ ներթափանցող ահուելի քանակությամբ դրամական միջոցների մասին, որոնք ենթադրաբար փոխկապակցվում են «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցությունների դաշինքի հետ և նախատեսված են ընտրական գործընթացներում ազդեցություն ստեղծելուն՝ կասկածի տակ առնելով 2026թ. ՀՀ Ազգային ժողովի համապետական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում վերջինիս ֆինանսական թափանցիկությունն ու ներգրավված արտաքին ֆինանսավորման աղբյուրները:

2. Դիմումի իրավական հիմքերը.

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ «Օրենսգիրք»)

1-ին հոդվածի.

<<1. Ազգային ժողովի, համայնքների ավագանիների, համայնքների ղեկավարների, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված համայնքների ղեկավարների, ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:>>,

3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի.

<<1. Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

2. Հանրային իշխանությունները հավասար պայմաններ են ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:>>

4-րդ հոդվածի համաձայն.

<<1. Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:

2. Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:>>

6-րդ հոդվածի.

<<1. Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:>>,

19-րդ հոդվածի 1-ին, 6-րդ և 8-րդ մասերի.

<<1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ ժամանակահատվածում քարոզչությունը ստորև անվանվում է **նախընտրական քարոզչություն:**

...

6. Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

...

8. Եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման

հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից:»>>,

27-րդ հոդվածի 5-րդ կետի.

<<5. Եթե նախընտրական քարոզչության համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ուղղություններով ծախսված գումարի և սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված՝ պետական բյուջե վճարվող տուգանքի գումարի չափի և նախընտրական հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափի տարբերությունը գերազանցում է նախընտրական հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափի 20 տոկոսը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դիմումի հիման վրա դատարանն ուժը կորցրած է ճանաչում թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը:»>>,

36-րդ հոդվածի 1-ին մասի.

<<1. Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ:»>>,

37-րդ հոդվածի.

<<1. Ընտրական հանձնաժողովներն ապահովում են ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:»>>,

48-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 3-րդ մասի 5-րդ կետի, 6-9-րդ և 11-րդ մասերի.

<<1. Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով: Եթե ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկվել է և վարչական, և դատական կարգով, ապա վարչական վարույթը կարճվում է:

2. Դատական կարգով ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

3. Ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել՝

...

5) ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը:

6. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի այլ որոշումները, ինչպես նաև գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական դատարան:

7. Ընտրատարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովներն ընտրությունները նշանակվելուց հետո՝ մինչև քվեարկության նախորդ օրը, ստացված դիմումներին պատասխանում, իսկ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են հնգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև քվեարկության սկիզբը: Քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, ստացված դիմումներին ընտրատարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովները պատասխանում, իսկ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, իսկ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ:

8. Սույն հոդվածի 9-18-րդ մասերով սահմանված են բացառություններ սույն հոդվածի 1-7-րդ մասերով սահմանված նորմերից:

9. Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի և կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմում կարող է ներկայացնել միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը:

11. Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում կարող է ներկայացվել միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով: Դիմումը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումը ընտրական հանձնաժողովը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է ընդունում դիմումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 12-00-ն:

Սույն մասի առաջին պարբերությամբ նշված որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան 3 օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն: Վարչական դատարանը որոշում է կայացնում 5 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը: >>

80-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

<<1. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

2. Քաղաքացին վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող չի համարվում, եթե թեկնածուի գրանցման համար մշտապես բնակվելու մասին տեղեկանքը ստանալու նպատակով բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմում

տալու օրվան նախորդող 1 461 օրերի ընթացքում նա առնվազն 731 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով:»>

87-րդ հոդվածի համաձայն.

<<1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը ճանաչում է անվավեր, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

1.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի իրավագործության բացակայության կամ համապատասխան որոշումներն ընդունված չլինելու հիմքով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը կարող է անվավեր ճանաչել միայն այդ հիմքերի առկայությունը հաստատող դատական ակտի հիման վրա:

2. Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու հետևանքով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն անվավեր չի ճանաչվում, եթե անգամ խախտվում են սույն օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները:

3. Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր է ճանաչվում, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով`

1) նա չունի ընտրվելու իրավունք.

2) նրա վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչվելու դեպքում թեկնածուն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հանվում է ընտրական ցուցակից:

4. Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի կամ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր է ճանաչվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:»>>»,

92-րդ հոդվածի 4-րդ մասի.

<<4. Նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակների համար նախընտրական հիմնադրամից իրավունք ունի ծախսելու նվազագույն աշխատավարձի 800 000-ապատիկը չգերազանցող գումար:»>>:

3. Պահանջը.

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ 2026թ. ՀՀ Ազգային ժողովի համապետական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրություններին մասնակցող <<ՈԻԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ>> կուսակցությունների դաշինքի կողմից շարունակաբար թույլ են տրվել սույն դիմումի բովանդակությունում նշված ՀՀ Ընտրական օրենսգրքի բազմաթիվ իրավանորմերի խախտումներ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա և դրանց հետևանքներն այլևս հնարավոր չէ վերացնել, ուստի այս համատեքստում խախտվում են նաև ընտրությունների անցկացման հավասարության, ազատության և թափանցիկության սկզբունքները, հետևաբար ՀՀ սահմանադրական կարգի, ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սկզբունքների և իրավունքների, ինչպես նաև ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված ու երաշխավորված ընթացակարգի, իրավունքների պաշտպանության նպատակով՝ խնդրում ենք՝

1. Անվավեր կամ ուժը կորցրած ճանաչել ԿԸՀ-ի 03.05.2026թ. N 69-Ա որոշումը՝ <<ՈԻԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցելու մասին,

2. Սույն դիմումով ներկայացվող 1-ին պահանջը չբավարարելու դեպքում՝ <<ՈԻԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցելու

մասին>> ԿԸՀ-ի 03.05.2026թ. N 69-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջով դիմել ՀՀ վարչական դատարան:

Կից ներկայացվում են սույն դիմումով ներկայացվող պահանջ հիմնավորող փաստաթղթերն ու այլ նյութերը:

<<ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ>> կուսակցության
նախագահ՝



Արամ Զավենի Սարգսյան

<< 05 >> հունիսի 2026թ.

Faint, illegible text at the top of the page, possibly a header or title.

Second line of faint, illegible text.



Faint, illegible text at the bottom of the page, possibly a footer or signature.

